



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՄԳ ԵՐԵՔՆԱԲԹԻ, ՅԻՇԱՏԱԿ ՏՎԱԸ ԿՈՄԱՆԱՑ

Աւագ Շաբթուան Երեքշաբթին օրն Է Քրիստոսի առակներէն՝ Տասը Կոյսերու խորհուրդին յիշատակման: Այս առիթով, ինչպէս ամէն տարի, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ Երեքշաբթի, 7 Ապրիլի երեկոյեան տեղի ունեցան յատուկ արարողութիւններ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Նախագահեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեանց ու այս առիթով ուղղեց պատգամ մը: Տասը կոյսերը կը ներկայացնէին Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհիներ ու աշակերտուհիներ: Առաջնորդ Սրբազանը վեր առաւ հինգ իմաստուն ու հինգ անմիտ կոյսերու վարմունքին իմաստը եւ կոչ ուղղեց հաւատացեալներուն, որ յարատեւ աղօթքով, բարի գործքով ու աստուածային պատգամներու կենսագործումով հոգեպէս միշտ պատրաստ ըլլան յաւիտեական կեանքը դիմաւորելու, հոգիներուն մէջ հաւատքի սերմերը արծարծ պահելու, ինչպէս կը թելադրէ հինգ իմաստուն կոյսերուն օրինակը:

COMMEMORATION OF HOLY TUESDAY

On the evening of Tuesday, April 7th, 2009, Holy Tuesday services, in commemoration of the Parable of the Ten Virgins, took place in all Prelacy Churches.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, officiated over the service and conveyed his message to the faithful at St. Mary's Church in Glendale. Sunday School teachers and students participated in the service representing the ten virgins.

The Prelate explained the meaning behind the parable and urged the faithful to follow in the example of the wise virgins by being resolute in our faith and spiritually ready at all times to receive eternal life.